Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Գիտակրթական
միջազգային կենտրոնի տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ
ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Հաշվետվություն

2017թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի

<u>Ներգնա և արտագնա շարժունություն</u>

- 2017թ. հունվարի 23-25-ին, փետրվարի 14-16-ին, 28-ին և մարտի 2-ին Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում Թուլուզի ինֆորմատիկայի հետազոտությունների ինստիտուտի (Institut Recherche en Informatique de Toulouse, France) դասախոսները ոլորտի մի քանի արդիական թեմաների շուրջ անցկացրեցին սեմինարներ և բաց դասախոսություններ: /Ընդհանուր թիվը՝ 6 ՊԿ/
- ERASMUS+կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում հայկական պատվիրակությունը՝ կազմված ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոնի պրոֆեսորադասախոսական և ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետազոտական կազմերից, այցելեց Ֆրանսիայի Փոլ Սաբատիեի (Թուլուզ 3) համալսարան և ֆրանսիացի գործընկերների հետ միասին քննարկեց մագիստրատուրայի ուսանողների կրթական գործընթացի ընթացիկ կարգավիճակը և բարելավման գործողությունները: /Ընդհանուր թիվը՝ 6 հոգի, որից 3-ը ՊԴ կազմ, 2-ը՝ ՀԿ, 1-ը՝ ՎԿ/

- 2017թ. սեպտեմբերին իր այցի շրջանակներում Տուշայի համալսարանի արտաքին կապերի բաժնի պետ Կառլո Կոնտարդոն անցկացրեց վերապատրաստում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ համապատասխան ամբիոնների վարիչների, ամբիոնների միջազգայնացման պատասխանատուների և վարչական անձնակազմի համար: /1 ՎԿ/
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» մասնագիտությամբ երկրորդ կուրսի 2 ուսանող մեկ կիսամյակ ուսանում են Ֆրանսիայի Փոլ Սաբատիեի (Տուլուզ 3) համալսարանում Էրասմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում:
- Էրազմուս+ կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ և Տուշայի համալսարանի միջև իրականացվող Erasmus+ KA107 շարժունության ծրագրով 2017թ. մայիսի 22-ից ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվիրակությունը այցելեց Տուշայի համալսարան (Իտալիա): 2017թ. մայիսի 25-ին Տուշայի համալսարանի ռեկտորատում հանդիսավորությամբ նշվեց հայկական օրը: /Ընդհանուր թիվը՝ 5 հոգի, որից 4-ը ՊԴ կազմ, 1-ը՝ ՎԿ/
- 2017թ. հոկտեմբերի 2-ից 5ը Էրազմուս+ կրեդիտային շարժունություն ծրագրի շրջանակներում Տուշայի համալսարանից ժամանած դասախոսները մի շարք արդիական թեմաներով դասախոսություններ և պրակտիկ խմբային քննարկումներ անցկացրեցին՝ եվրոպական առաջավոր փորձի փոխանցման և վերապատրաստման նպատակով: 2017թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն ընդունեց Հայաստանում Իտալիայի դեսպան Ջովաննի Ռիչուլլիին և Իտալիայի Տուշայի համալսարանի պրոֆեսորադասախոսական պատվիրակությանը: /Ընդհանուր թիվը՝ 5 հոգի, որից 4-ը ՊԴ կազմ, 1-ը՝ ՎԿ/

ԳԱՑ ցուցանիշ 6.1. Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների թիվը

	2012	2013	2014	2015	2016	2017
Պայմանագրերի թիվը	8	10	13	14	18	25
Գործուղումների թիվը ըստ գործընկերների	4	2	12	1	6	11

ԳԱՑ ցուցանիշ 6.2 Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից

ԳԿՄԿ

	2012	2013	2014	2015	2016	2017
Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ	1	0	1	0	9	12

Ցուցանիշ 6.3 Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվը

	2012	2013	2014	2015	2016	2017
Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվ	0	0	0	0	8	2*

- Հայտարարված մրցույթների արդյունքում 2017-2018 ուստարվա երկրորդ կիսամյակում գործընկեր բուհերում կուսանեն ԳԿՄԿ 9 ուսանող:

Վերիտաս՝ «Զալցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթության երրորդ մակարդակի կառուցվածքային զարգացում» ծրագիր

- 2017թ. փետրվարի 8-ին ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի երիտասարդ գիտնականների խորհրդի ժողովը, որի օրակարգն էր Գ.00.03 - «Մոլեկուլային և բջջային կենսաբանության» ասպիրանտական ծրագրի ինքնավերլուծության քննարկումը:
- 20172. ապրիլի 3-ին փորձագիտական խումբն արտաքին գնահատման նպատակով այցելեց ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ, որտեղ փորձագետները քննարկեցին ասպիրանտական ծրագրի ինքնավերլուծությունը և հարակից այլ փաստաթղթեր, հանդիպեցին ՀՀ ԳԱԱ ՄԿԻ գիտական ղեկավարների և ասպիրանտների հետ և քննարկեցին ասպիրանտական ծրագրում նրանց հուզող խնդիրները, ինչպես նաև այցելեցին համապատասխան ենթակառուցվածքներ՝ լաբորատորիաներ, համակարգչային լսարաններ և գրադարան:

- 2017 թ. հուլիսի 1-2-ը Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում տեղի ունեցավ ծրագրի հերթական աշխատաժողովը, որին մասնակցում էին ՀՀ 10 բուհերի, ինչպես նաև ՀՀ ԿԳ նախարարության և ՀՀ ԳԱԱ աշխատանքային խմբերը:
- 2017թ. հոկտեմբերի 12-ին Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում տեղի ունեցավ Վերիտաս ծրագրի ամփոփիչ համաժողովը: Ծրագրի շահակիցները համաժողովի ընթացքում ամփոփեցին հիմնական ձեռքբերումները, առկա լավագույն փորձը, քննարկեցին արդյունքների հետագա կիրառելիության ապահովումը:
- ***Հաշվետու տարում ծրագրի շրջանակներում ԳԱԱ աշխատանքային թիմը մշակել և հրատարակել է «Մոլեկուլային և բջջային կենսաբանության» ասպիրանտական ծրագրի ինքնավերլուծությունը, «Մոլեկուլային եվ բջջային կենսաբանություն» ասպիրանտական ծրագրի տեղեկատվական գրքույկը, ինչպես նաև մասնակցել է Հետբուհական կրթական ծրագրերի մշակման և իրականացման ուղեցույցի մշակմանը:***

Հեռավար մագիստրոսական կրթություն՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ

- 2017թ. ապրիլի 14-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում հավաքվել էին Հայաստանում հեռավար կրթության ոլորտում առաջատար կազմակերպությունները՝ քննարկելու Հայաստանում հեռավար կրթության զարգացման վերջին միտումները և առկա խնդիրները: Քննարկման մասնակիցներն էին Հայկական վիրտուալ համալսարանի, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի, «ԱՄՆ խաղաղության կորպուս/Հայաստան» կազմակերպության և «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի, ինչպես նաև «Dasaran» առցանց հարթակի ներկայացուցիչները, որոնք ներկայացրեցին հեռավար կրթության ոլորտում իրենց կողմից կատարված աշխատանքները և հեռավար կրթության կազմակերպման ընթացքում ծագող խնդիրներն ու հաղթահարման ուղիները, իսկ այնուհետև պատասխանեցին մասնակիցների հարցերին:
- 2017թ. հունիսի 22-ին ՀՀ ԳԱԱ նախագահության կլոր դահլիճում տեղի ունեցավ ծրագրի աշխատաժողովը: Աշխաժողովի մասնակիցներն էին «Գործարար վարչարարություն» համատեղ մագիստրոսական կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը ՀՀ պետական

կառավարման ակադեմիայից և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնից, ծրագրի աշխատակազմը և անհատ խորհրդատուներ:

- 2017թ. հուլիսի 8-ին տեղի ունեցավ ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման վերջին դասը, որտեղ դասախոսները ներկայացրեցին հատվածներ պատրաստի հեռավար դասընթացներից և ընդհանուր քննարկեցին դասընթացների կառուցման առանձնահատկությունները: Այնուհետև դասախոսներին շնորհեցին հավաստագրեր՝ վերապատրաստման դասընթանցը բարեհաջող ավարտելու կապակցությամբ:
- 2017թ. սեպտեմբերի 14-ին տրվեց ծրագրի երկօրյա շնորհանդես-սեմինարի մեկնարկը: ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն Ալբերտ Սարգսյանը և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Արսեն Լոքյանը ստորագրեցին համաձայնագիր համատեղ հեռավար մագիստրոսական ծրագրի վերաբերյալ:
- 2017թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ ծրագրի եզրափակիչ համաժողովը: Մասնակիցներն ամփոփեցին կատարված աշխատանքը, ձեռքբերումները, խոսեցին այն դժվարությունների մասին, որոնք հաղթահարելով՝ հասել են եզրափակչին: Ծրագրի առանձնահատկությունն այն է, որ առաջին անգամ Հայաստանի կրթական համակարգում իրականացվում է հեռավար կրթություն, որի ավարտին շրջանավարտներին համատեղ դիպլոմ է շնորհվելու:

Հաշվետու տարում ձեռք բերված շոշափելի արդյունքներ՝

- **2017թ-ի հունիսի 28–ին ՀՀ ԿԳ նախարարի NN731-Ա/2 հրամանով ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ին տրվել են «Մագիստրոսի կրթական ծրագրերով, հեռավար ուսուցմամբ՝ 041301.007 «Կառավարում (041301.04.7 «Գործարար վարչարարություն») մասնագիտության գծով կրթական գործունեության» փորձնական (պիլոտային) թույլտվություն ՝ 3տարի ժամկետով)**
- **Լույս է տեսել հեռավար ուսուցման կազմակերպումն ու իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածուն, մշակվել են ուսանողի և դասախոսի ուղեցույցներ**
- **Կազմակերպվել է երկու մամլո ասուլիս գործընկեր բուհերի ներկայացուցիչների մասնակցությամբ**
- **Ստորագրվել է համատեղ հեռավար մագիստրոսական ծրագրի համաձայնագիր ՀՀ ՊԿԱ-ի հետ**
- **Մեկնարկել է «Գործարար վարչարարություն» հեռավար համատեղ մագիստրոսական կրթական ծրագիրը:**

<u>Բաժնի կողմից կազմակերպված միջոցառումներ</u>

- 2017թ. ապրիլի 6-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի նախաձեռնությամբ կազմակերպված հանդիպմանը DAAD երևանյան գրասենյակի տնօրեն տիկին Սիլվիա Շմիդը և ուսումնական և կրթաթոշակային ծրագրերի խորհրդատու Շուշաննա Թադևոսյանը մասնակիցներին ներկայացրին Գերմանիայի հետազոտական համակարգն ու հետազոտության ֆինանսավորման հնարավորությունները:
- 2017թ. ապրիլի 13-ին ԳԿՄԿ-ում էր Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության համալսարանների համագործակցության գծով պատասխանատու Ֆրեդերիք Ռեյնբոլդը: Հանդիպմանը մասնակցում էին դասախոսներ, Ֆրանսիայում ուսանել ցանկացող մագիստրատուրայի ուսանողներ և ասպիրանտներ:
- 2017 թ. ապրիլի 26-28-ը Երանում՝ «Yerevan EXPO» ցուցասրահում, անցկացվեց հերթական՝ տասնվեցերորդ միջազգային մասնագիտացված «Կրթություն և կարիերա EXPO 2017» ցուցահանդեսը, որտեղ ներկայացվեց Գործարար վարչարարություն» հեռավար համատեղ մագիստրոսական կրթական ծրագիրը:
- 2017թ. հունիսի 22-ին արտաքին կապերի բաժնի պետի հրավերով Լեհաստանի Լոձի համալսարանի միջազգային համագործակցության ծրագրերի պատասխանատու Կատարժինա Ռայլին այցելեց ԳԿՄԿ, որտեղ միջազգայնացման պատասխանատուները զրուցեցին ԳԿՄԿ և Լոձի համալսարանի միջև համագործակցության մեկնարկի և հեռանկարների մասին և նույնականացրեցին համագործակցության ձևերը և մեկնարկային քայլերը:
- 2017թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ն հյուրընկալեց իրանական պատվիրակությունը՝ Իրանի Ուրմիայի համալսարանի արտաքին կապերի վարչության պետ Նասեր Աղի գլխավորությամբ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին հետագա համագործակցության հնարավորությունները և գիտության և կրթության ոլորտում իրանական համալսարանների հետ, ինչպես նաև համագործակցության հուշագիր կնքվեց Ուրմիայի համալսարանի հետ:

Կնքված նոր հուշագրեր և համաձայնագրեր

<u>Միջազգային հուշագրեր և համաձայնագրեր</u>

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արևելագիտության ամբիոնը համագործակցության

համաձայնագիր է ստորագրել Իտալիայի Բոլոնիայի համալսարանի պատմության և մշակույթների դեպարտամենտի հետ

- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության նոր միջինստիտուցիոնալ համաձայնագիր Տուշայի համալսարանի հետ /Իտալիա/ 2017-2019թթ.
- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության միջինստիտուցիոնալ համաձայնագիր հետ Դոմբրովա-Գուրնիչա համալսարանի հետ /Լեհաստան/ 2017-2019թթ.
- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության նոր միջինստիտուցիոնալ համաձայնագիր Փոլ Սաբատիեի (Տուլուզ 3) համալսարանի հետ /Ֆրանսիա/ 2017-2019թթ.
- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության միջինստիտուցիոնալ համաձայնագիր Բոլոնիայի համալսարանի /Իտալիա/ 2017-2019թթ.
- Համագործակցության հուշագիր Ուրմիայի համալսարանի հետ /Իրանի Իսլամական Հանրապետություն/
- Գործընկերային համաձայնագիր Huahe International ընկերության հետ /Չինաստան/

<u>Ներպետական հուշագրեր, պայմանագրեր և համաձայնագրեր</u>

- Համատեղ կրթական ծրագրի համագործակցության պայմանագիր ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հետ
- Համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստուտի հետ
- Համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ
- Համագործակցության համաձայնագիր Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի հետ
- Համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ
- Համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի հետ
- Համագործակցության համաձայնագիր ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի հետ

Մշակված փաստաթղթեր

- Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության ուղեցույց
- Միջազգայնացման հարցաթերթիկ

Հաշվետու տարում բաժինը՝

- պատրաստել, թարգմանել և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վեբկայքում է տեղադրել 50 նորություն և 52 հայտարարություն, որը կազմում է ԳԿՄԿ վեբկայքում տեղադրված նորությունների և հայտարարությունների առավել քան 60%-ը:
- կազմակերպել է 1 օտարերկրյա դիմորդի անձնական գործի ձևակերպում:
- օժանդակել է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ հանդիսացող ԳԱԱ 3 ասպիրանտների և ուսանողի 1 ընտանիքի անդամի համար ՀՀ-ում բնակվելու մեկ տարվա ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու հետ կապված հարցերում:
- աջակցություն է ցուցաբերել ինչպես Էրասմուս+ ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ից Ֆրանսիա և Իտալիա մեկնող ուսանողների (մագիստրատուրա և ասպիրանտուրա) երկարատև վիզաների ձեռք բերման գործընթացին, այնպես էլ աշխատակիցների համար կարճաժամկետ վիզաների ձեռք բերման գործընթացին:

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժնի պետ՝ Ա. Հարությունյան

30.01.2018թ.